



չիւր էին արձակել, իրանց ծովում ունենալով խաղողի ողկոյններ, Բայց շատ ժամանակ չանցնելուց յետոյ ցրտահարված չիւրեր փոխարէն դուրս եկան նորերը դարձեալ խաղողի ողկոյններով, միայն ոչ այնքան, որքան առաջին անգամը։ Եթէ վերջին ողկոյնները մնային եւ չը վնասվէին «oidium» (մոխիր) կոչված հիւանդութիւնից, այն ժամանակ խաղողի բաւարար հունձ կարող էր լինել, բայց որովհետեւ այդ հիւանդութիւնով վարակված է համարեալ իւրաքանչիւր այգի, ուրեմն տողեցիները այս տարի կը զրկվեն խաղողի բերքից (բացառութիւնները քիչ են)։

Պէտք է ասել, որ oidium-ի եւ առհասարակ վազերի միւս հիւանդութիւնների դէմ այստեղ ոչ մի բժշկական միջոց ձեռք չէ առնվում, չը նայած որ սրանց 5—6 տարի առաջ ֆիլովսերային կոմիտէի կողմից ինստրուկտոր է եղել ուղարկված Շուշու գաւառի խաղողագիտական վարչերը, տեղն ու տեղը ծանօթացնելու գիւղացիներին վազերի հիւանդութիւնների դէմ կռուելու միջոցների հետ եւ գիւղացիների ներկայութեամբ բժշկել է տեղացի Սարգիս բէկ Մեղիք-Սեդանեանի այգին, բայց դժբաղդաւոր գիւղացիները չեն պարապում վազերի բժշկութեամբ։

Որ գիւղացիները չեն պարապում վազերի բժշկութեամբ, այդ կարելի է վերագրել այն հանգամանքին, որ պ. մասնագէտի արած փորձը այնքան էլ արդի չէ եղել այն պատճառով, որ ծծումբը ցանված է եղել անժամանակ, այսինքն այն ժամանակ, երբ հիւանդութիւնը արդէն երեւացած է եղել (հաւանական է, որ մասնագէտը ուշացած լինի)։ Որքան մենք գիտենք, վազերի բժշկութիւնը նախագիտական պէտք է լինի, որպէս զի հիւանդութիւնը սաղմի մէջ փչանալու Առհասարակ oidium հիւանդութեան դէմ ծծումբը ցանում են 3 անգամ, ծաղկելուց 2 շաբաթ առաջ, երբ վազերի չիւրեր մի վերջով երկարութիւն ունեն, ծաղկելու ժամանակ եւ ծաղկելուց 2—3 շաբաթ յետոյ։ Հարկաւոր եղած դէպքում կարելի է ծծումբը ցանել եւ 4-րդ անգամ։

Ինչպէս գիւղացիները վկայում են, բժշկած վազերը ոչնչով չեն զանազանի հարեան այգիների վազերից, որոնք դարձեալ վարակված են եղել վերոյիշեալ հիւանդութիւնով։

Գիւղացին տեսնելով այդ կարող է վազերի բժշկութեան նախը իրեն մի անմիտ բանի եւ նրա հետեւը դէպի բժշկութիւնը բողբոջի կը կորչի։

Աւելի լաւ է վազերի բժշկութիւնը սկսել իր ժամանակին եւ մեծ տարածութեան վրա, որպէս զի գիւղացին լաւ համոզվի բժշկութեան օգտակարութեան մէջ։

Բազմութիւնը սկզբում խանդավառ ու անհոգ, կամաց կամաց յուզվում է, աշխատելով տեղ բռնել այն անցիկ երկու կողմերում, որտեղից անցնելու է պարզ։ Հանդիսաւոր թափփորին յատկապէս ճանապարհի երկու կողմերում շարված են հրացանաւոր պահակները, զեղին-կարմիր խայտաբղէտ զգեստներով եւ սաղաւարտների վրա գունաւոր զինուորական ցցունքով, որ սպանալի կերպով օրօրվում է ուխտաւորների զուլիններից բարձր, հէնց ս. Պետրոսի բրնձեղայ արձանի դէմ ու դէմ, որ կարծես նայում է իր մտադրեալ աչքերով այս բոլոր պատարասութեան, նայում է եւ հասկանալ չէ կարողանում։ Արդարեւ այս խաչված, հեղ ջրիստութիւն, լացող մաղձանների, վիզը ծուռ՝ նահատակվող սրբերի, մանաւանդ այս խեղճ Պետրոսի առաջ այս սուրհմբեր փայլը, օրորվող ցցունքները, այս զինուորական սարքն ու կազմը մնում են որպէս մի հոգի ճնշող, անխորժ հանելուկ։

Ժամը 12-ն է արդէն, բայց դեռ պապը չը կայ։ Բազմութիւնն էլ աւելի մեծանում է. ումանք տեղ են բռնում այս ու այն մատուռի աստիճանների վրա, ուրիշները շտապում են իրարից կանկխելով, չանգնելով մի կերպ տեղաւորվել մարմարե սիւների բարձր, պատուանդանների վրա։ Անգլիացի կանայք, որանց ցեղի գործնական ոգին տանում են ամեն տեղ, ներանցից երկուսը հետեւին ունեն մի մի ծալվող աթոռ, որոնց վրա նստում են, ինչպէս իրանց տանը, իսկ երբ պապը յայտնվի, անշուշտ, չը բաւականանալով իրանց բարձր հասակով, կը բարձրանան աթոռների վրա՝ լաւ տեսնելու համար։ Ամենքը նայում են դէպի դուռը, ամենքը յուզված են, բացի մի անգլիացուց, որ մարմարից տաշած արձանի նման կանգնել է իմ կողքին եւ յառաջ կերպով նայում է բարձր, եկեղեցու գմբէթին։ Յանկարծ մուտքի առաջ կանգնած ամբողջ առաջին շաբերը երեւալ

Յանկարի կը յիշէր, եթէ կովկասեան Գիւղաւորտեանական ընկերութիւնը ուշադրութիւն դարձնէր այդ հանգամանքի վրա եւ հէնց եկող տարւոյնից իր ժամանակին ուղարկէր մի քանի մասնագէտներ (եթէ այդ կարելի է ընկերութեան կողմից)։ Շուշու գաւառի խաղողագիտական վարչերը փորձնական բժշկութիւններ կատարելու համար։

Հ. Կոստանդեանց

ՆԻՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը ներկայ օգոստոսի 20-ին Ալեքսանդրոպոլի եւ Դարաքիլիսայի վրայով ուղևորվեց Դիլիջան, որտեղից պէտք է այցելէ Հաղարծնի վանքը։

Թիֆլիսում նկատելի կերպով մեղմացել է չորը։ Գիշերները ջերմացաւ իջնում է մինչեւ 18—17 աստիճան ըստ Բեօմիւրի։ Ամառնոց զնացածները սկսել են վերադառնալ մեծ թիւով։

Մօտ օրերում Թիֆլիս եկաւ յայտնի ռուս հրապարակախօս Վ. Մ. Դորոշնիկի։

Որովհետեւ Թիֆլիսում լուրեր էին պտտում, թէ մասվաճառութեան քաղաքային խանութներում ծախվող անասունների միսը վարակված է մի ինչ-որ տարափոխիկ հիւանդութեամբ, քաղաքային անասնաբույժ Տէր-Ստեփանեան անասնաբուժական զննութեան ենթարկեց այն կենդանիներին, որոնք պատկանում են քաղաքային մասվաճառութեան խանութներին։ Քննութիւններից երեւաց, որ այդ լուրերը անհիմն են, կենդանիները բոլորովին առողջ են։

Կոյրերի խնամատար Կովկասեան հոգաբարձութեան խորհուրդը խնդրում է մեզ հաղորդել, որ 1902 թվականի յուլիսի 1-ին հոգաբարձութեան գրասենյակում կար 16,970 ռուբլի 31 կոպէկ, յուլիս ամսի մէջ ստացված են՝ տոկոսաբեր թղթերով—3000 ռուբլի եւ առձեռն գրամով—2881 ռուբլի 69 կոպէկ, ընդամենը 22,852 ռուբլի։ Նոյն ամսվա ընթացքում ծախսված է 4,452 ռուբլի 81 կոպէկ եւ առ 1-ն օգոստոսի 1902 թվականի հոգաբարձութեան գրասենյակում կար 18,399 ռուբլի 19 կոպէկ։

Ներկադրութեան եւ պետական կալուածների միջնատրութիւնը որոշել է հիմնել Անդր-կովկասում տնկարան այնպիսի բոյսերի, որոնցից ստացվում են եթէրային իւղեր։ Տնկարանի տեղը դեռ եւս չէ որոշված եւ այդ մասին հարց

սկսեցին, մի շուկ անցաւ տաճարի մի ծայրից մինչեւ միւս ծայրը, բոլոր զուրնները մի կողմ դարձան, պահակների ցցունքները աւելի արագ եւ աւելի սպառնալի կերպով երեւացին. ապա հետաւորութեան մէջ հնչեց՝ «վիվս պապա», վիվս պապա։ Աղաղակ բերանից բերան անցաւ, կրկնվող արձագանքներով մեծացաւ, տարածվեց եւ հազարաւոր կողորդներից դուրս հնչվող վիվսները դարձան ալիքների մոռնիներ եւ գնացին մեռնելու բարձր կամարների տակ։

Հետո եկեղեցու կիսախաւարի եւ փողով մշուշի մէջ ամբողջ գլխից բարձր մի բազկաթոռ եւ օրօրվում հանդիսաւոր զանազանութեամբ եւ նրա մէջ նստած է պապը՝ Լեւոն XIII-ը։ Եւ քիչ անգամ եւ տեսել մի ծերութիւն, որ անգամ ֆիզիքապէս այդ աստիճան մանկութեան մօտեցաւ, մօտ մի դար ապրող այդ մարմինը այնքան է մաշվել, այնպէս փոքրացել, որ կարծես մի մանուկ լինի բազկաթոռի մէջ եւ այն համարեալ անկենդան մանուկն է։ Նա գունատ է, որպէս մոմից շինված մի արձան, երբեմն երբեմն կարծես իր կենդանութիւնը վկայելու համար բարձրացնում է իր վտիտ փոքրիկ ալը։ Խաչակնքում է հօտի զուլիններից բարձր, չըրթվում են ծերի բարի, խեղճ ժպտով, որ այնպէս խոսում է գերեզմանից։ Տարիները սակայն զեն իսպառ անկալող չեն դարձել այդ փառքի փոքրիկ մարմինը։ Դին եռանդի եւ կարողութեան մի մնացորդ կայ եւ նա խաչակնքելիս երբեմն յիշում է բազկաթոռի մի թելի վրա, մի փոքր բարձրանում է տեղից, ժպտում է աւելի երկար եւ այդ ժամանակ ամբողջ էլ ուրախանում է, ոգևորութիւնն աճում է, հազարաւոր բերանների աւելի եռանդով են ճնշում «վիվս պապա», վիվս պապա։ Կանաչ օդի մէջ ճօճում են սպիտակ թալկինակները, տղամարդիկ զիւարկները, կրեւականները, որոնք մի փոքր զերիծօրի դերի մէջ են, միշտ ձեռքերը բարձ-

է առաջարկված միջնատրութիւնից երկրագործութեան միջնատրի կովկասեան լիազօրին։

Բարձրագոյն հրամայված է հիմնել Վարչա-վայի պօլիտեխնիքական ինստիտուտում լեռնային բաժանմունք, որի աւելող գաւառները, որպէս փորձ, պէտք է տեսէ չորս տարի։ Այն անձինք, որոնք կաւարտեն ինստիտուտի լեռնային բաժանմունքում, կը ստանան լեռնային ինժեների կոչում։

Երկրագործութեան եւ պետական կալուածների միջնատրին 50,000 ռուբլու կրէդիտ է բազած փոխառութիւններ անելու արեւմտեան —սիբիրական ընկերութիւններին՝ իւրի պատրաստութեան գործարաններ հիմնելու համար։

ՄԵՆՏ-ՂԱՐԱՔԻՍԱՅԻՑ մեզ գրում են. «Այսօր, օգոստոսի 20-ին, առաւօտեան զնացքով Ալեքսանդրոպոլից տեղը ժամանեց, որտեղից ամենապիւստի կաթողիկոսը, փոքր ինչ հանգիստ առնելուց յետոյ, մեկնեց Դիլիջան»։

ԳԻՐԳ գիւղից (Շամախու գաւառ) մեզ գրում են. «Օգոստոսի 11-ին, կիրակի օրը, հանգիստաւոր կերպով օձկեց Գիւրգ գիւղի նորակառոյց եկեղեցին, որը կառուցել է գիւրգեցի բազումաւանակ Յարութիւն Դորաշեանցը։ Եկեղեցին օձելու համար եկել էին Շամախու յաւոր Յիւրիք վարդապետը եւ կոնսիստորիայի անդամ Տաճատ Բաճ. Մարաղիւնցը։ Օձման ներկայ էին մօտակայ գիւղերի հասարակութիւնները ու ծիական քահանաները։ Պատարագը վերջանալուց յետոյ ամենքը հրաւիրեցան պ. Դորաշեանցի տանը հացկերոյթի։ Հացկերոյթի ժամանակ ճառեր խօսեց Եղիշէ քահ. Գեղամեանցը, որը եկել էր տեղա Բազուից ընդհիլ պաշտօնով։ Ծոխ ու համարաւ թէ չընայ ճաշկերոյթից յետոյ պ. Դորաշեանցը փող բաժանեց քահանաներին. մօտակայ գիւղերից եկած քահանաները ստացան ամեն մէկը 2 ռուբլի 50 կոպէկ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Temps» լրագրին հետադրում են Կ. Պօրսից, թէ ամերիկական ղեկավար ստացել է Բ. Դուրից պաշտօնական խոստումներ, որոնք վերաբերում են Միացեալ-Նահանգների հպատակ հայերին Դեսպանը վերականգնել իր յարաբերութիւնները Իլլիոյ-Իսուկի հետ, որոնք ընդհատված էին մի քանի օրով նրա համար, որ մեծ վիզիւրը, անյետաձգելի գործեր ունենալու պատրուակով, հրաժարվել էր երկու անգամ ըն-

րացնում են օդի մէջ եւ ջրածօրէն շարժում։ Իմ կողքին մի կին կայ, որ գրկած ունի երեք տարեկան մի երեխայ, «վիվս պապա» ճշում է մայրը. «վիվս պապա», կրկնում է մանուկը փոքրիկ մատը մեկնելով դէպի բազկաթոռի մէջ շարժվող փոքրիկ ստուգները։ Նայում եմ անգլիացուին, մէկը նրան բացատրում է թափփորը, ցոյց է տալիս պապին, անտանում է կարգի-նայնիւրին, մենտօրը երեւի ջերմոտանդ կաթօլի է, նա չէ ինայում իր պերճախօսութիւնն ու գիտութիւնը, իսկ անգլիացին ի պատասխան այդ բոլորին՝ բարձրից թարթում է իր կապոյտ աչքերը, նայում է սառնութեամբ եւ կրկնում՝ «իսա»։

Եւ բազկաթոռը այդ փոքրիկ մարմնով անցնում է զանազանութեամբ չորս կրօնաւորների ուսերի վրա, եւ պապը շարունակում է խաչակնքել զոգործուն աղով, շարունակում է ժպտալ յոգնած, բարի ժպտով, որ այնպէս օղորմելի է դարձնում նրա փոքրիկ, ածիւած դէմքը, իսկ ամբողջ շարունակում է ճալ՝ «վիվս պապա», վիվս պապա։ Ահա բազկաթոռը հասաւ մայր սեղանին. պապին իլեցնում են, նա տեղաւորվում է հայրապետական գահի վրա, ապա վեր է կենում, աղօթում է իր հօտի համար, ամբողջ ծուռն է չորում մի մարդու պէս, գլուխները կռնում են վար, հազարաւոր յրթնները մրմնում են ինչ որ խորհրդաւոր խօսքեր, եկեղեցին իր պետով թագաւորում է այս գլուխների ծովի վրա, զգում եւս, որ այսպէս էլ բազմութիւնն չը կայ, այլ կայ միմյանց օգնութիւն, մի հատիկ ողորմելի հոգի, որ սողում է երազների մէջ անորոշութեամբ եւ առեղծուածներով պայարված. եկեղեցու, կրօնի յաղթութիւնն է այս երկու հազար տարւայ պայքարով ձեռք բերված։ Աղօթքից յետոյ ուխտաւորներից աւելի արտօնալիները մօտենում են, խմբով ծուռն ընկնում պապի ոտների առաջ եւ յետ գնում Թափփորը վերսկսվում է

դուռնի Միացեալ-Նահանգների ներկայացուցիչները, ինչպէս հաղորդում են Ֆրանսիական գիւրգը, բօթական գեներալների լիազարգացեալ ժամանակ կրէդէրի հետ գայում, վերջինը յայտնեց, որ նա նախապէս որոշել է չը վերադառնալ հարաւային Աֆրիկա եւ ընդ միջոց չօլլանդիայում։ Տրանսիլանիան նախկին ռապիտութեան նախագահը կարծիք նեց նոյնպէս, որ Եւրոպայում եւ Ամերիկայում իրաւաւորութիւններ ժողովելու համար տեղափոխ պատճառով աւերված բօթական գաւառները թեւեւ օգտին պէտք է ուղի, ոչ բօթական գեներալները միայն, այլ եւ կին հանրապետութեան ներկայացուցիչ Թիշեր, Վէստլեյ եւ Վօլմարանս։ Վերջինի միջոց, յայտնեցին իրանց եւ հարաւային Աֆրիկայից փախածների կողմից, թէ պէտք է պահանջեն անգլիացիներից վերադառնալ իրանց գրաված կալուածները եւ ունեն վերադառնալու հայրենիք։

Ֆրանսիայում, ուղղիչ ոտակաւոր գաւառաններում, կատարվում է այժմ անկարգութիւնների վերջաբանը, որոնք ունեցան կրօնական միաբանութիւնների սուսնարանների փակման առիթով։ Լիլլոյ քանի ցոյց անողներ, Մուլօ համայնքի բնակիչներ, զատապարտվեցին վեցօրեայ բանտ կոչման։ Մօտեցյում նոյն պատժին են վրձնված է նախկին գաւառը որ Գոտֆէլլ ուսուցիչը եւ այլ այդ տեսակ յանցանքներ մար դրամական տուգանքների, որոնց սակայն աւելի չէ միւրեւել հարկի ֆրա Միւս կողմից շատ տնտեսներ, որոնց թիւների մէջ էին զետեղված հոգեւոր սուսնարանները, զատ նա բաց արել պրէսիներ դէմ այն բանի համար, որ նրանք րեւարար կնիք են դրել մասնաւոր անձանց փակաւորութիւնների վրա։

Կ. Պօրսից հաղորդում են, որ Բ. Դորաշեան արձակեց, որպէս զի բոլոր գրաւանները, որոնք ծախում են թիւրքերէն, ուով գրքեր, ներկայացնեն տեղական գրաւան վարչութեամբ այն բոլոր անձանց ցուցակը, որոնք նրանց օտա գնել են գրքեր, նախորդ անկով, թէ գնողներից իւրաքանչիւր գրքեր է գնել Այդ միջոցը կարելի պէս հարուստ էլ հասցնէ գրաւանաւորներին թիւրքերայում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ի Ա Ն Կ Ա Ր

Եւ առիթ ունեցալ ճանապարհորդակից թիւրքաւայ գաղթականների մի խմբի, որ նում էր դէպի Կարս։

Ներկայումս կայարանում, ուր հասել էին մեծ թիւով գաղթականներ, շտապով ու գարձ էին անում գաղթականների գլխաւոր եւ նոյն կարգով, նոյն ճանապարհով պրթնում է եկեղեցին վիվսների եւ ծախութիւնների մէջ։ Այժմ նա աւելի յոգնաւելի թոյլ էլ չէ փորձում բարձրանալ կաթոռի մէջ։

Գիւրգեան մի զգացմունք է զարթնաւոր սրտի մէջ դէպի այս քաղաքով մարմաւայ ծերունին, որ կատարեալ հանդիմանում եւ խաղաղութեան գերագոյն լուռն ունի, եւ որին չը գիտես ինչն է նա բազկաթոռի մէջ եւ ճօճելով քաղաքի ամբողջ գլուխների վրայից փողով ամպիլի բայց սեւ բանակին հարկաւոր է իր ոյլ կարողութեան մարմնացումն ի ցոյց դնել։ Կատար ամբողջին էլ հարկաւոր է մի շարք կենդանի արարած, որ նրա կրօնական կրօնի, ֆանատիկ երեւակայութեան պրթնիցնէ։ Անհատականալի, երեւակայական գլխութիւն ըմբռնելու իր յուսաւառ անկարգութեան մէջ ողորմելի մարդը դարբնից իր նմանի փէշերից եւ նրա մէջ մարմնից այդ զօրութիւնը Դուրաշեանցած մի չէր հերոսացած մի իշխան, մի նահաւառ, մի մի արքայ, վերջապէս մի պապ, հետգնեւել հոգու մէջ իշխող դարաւոր պարագը բռնեց Այսօր էլ նոյնն է, ինչ որ դարեւ առաջ. գաղթական սկզբունքը չէ փոխվել, մարդիկ անհագիտ, յարաբեւ դէպի անյայտը ճգնող ցաւաւոր գաղթականներն են կազմում կրօնի հիմունքը եւ նրանց յաղթանակը ֆիզիքական, նիւթական զօհի տեղ նոր ները պահանջեցին եւ հաստատեցին բարձր կանոն, մարդկային արժանիքի, նրա մարմնի ազատութեան զոհաբերութիւնը։ Առողջ կանոնութիւնը կայ, սակայն, որ տակաւին փրկարար առաքելութեան վարձանին չէ հասնում։

Ա. Ահարոնեան



